Արձանագրություն N 4
«ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/8-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Երևան, Պուշկինի 56 ա

«11» «07» 2017թ.
ժ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վլադիմիր Հովհաննիսյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Մարիաննա Կատվալյանը, Նարեկ Հարությունյանը, Տիգրան Մելքոնյանը և Անի Գևորգյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Նամալյանը

«ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/8-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին

(Վ. Հովհաննիսյան)

1. «ՄԻՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/8-1» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած «Կոմպասս» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. Ուսումնասիրելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրերը, ինչպես նաև կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով

նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած «Կոմպասս» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժնի համար՝

ա) Ընտրված մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2-րդ չափաբաժնի համար՝

ա) Ընտրված մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3-րդ չափաբաժնի համար՝

ա) Ընտրված մասնակից ճանաչել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել պայմանագիր կնքելու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, ք. Երևան, Պուշկինի 56 ա հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Նախագահ՝_____ **Վ. Հովհաննիսյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Մ. Կատվալյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Ն. Հարությունյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Տ. Մելքոնյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Ա. Գևորգյան**

Քարտուղար՝_____ **Ա. Նամալյան**